ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2018Թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 1-3-Ը ՂԱԶԱԽՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **ԱՆՈՒՆԸ, ԱԶԳԱՆՈՒՆԸ**

Տիգրան Մելքոնյան

2. **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**

ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության արտաքին կապերի վարչության պետ

3. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ/ԺԱՄԿԵՏՆԵՐԸ**

Ղազախստանի Հանրապետություն (Աստանա), 2018թ. նոյեմբերի 1-ից 3-ը

4. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**

ԱՊՀ էլեկտրաէներգետիկական խորհրդի գործադիր կոմիտե

5. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ (ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ Ո՞Ր ԽՆԴՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՒՂՈՒՄԸ).**

Մասնակցել ԱՊՀ էլեկտրաէներգետիկական խորհրդի 53-րդ նիստին

6. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ**

Քննարկվեցին նիստի օրակարգով նախատեսված հարցերը՝

- ԱՊՀ մասնակից երկրների էներգահամակարգերի 2018-2019թթ. աշուն-ձմեռ նախապատրաստական աշխատանքներ,
- ԱՊՀ էլեկտրաէներգետիկական խորհրդի և Եվրասիական տնտեսական հանձնաժողովի միջև համագործակցության հուշագիր,
- ԱՊՀ էլեկտրաէներգետիկական խորհրդի և բարձր լարման խոշոր էներգետիկական համակարգերի միջազգային խորհրդի ՌԴ ազգային կոմիտեի միջև համաձայնագիր,
- ԱՊՀ էլեկտրաէներգետիկական խորհրդի նախագահի ընտրություն,
- ԱՊՀ մասնակից երկրների համագործակցության և փոխգործակցության հայեցակարգում փոփոխություն և լրացում,
- ԱՊՀ էլեկտրաէներգետիկական խորհրդի էներգետիկական սարքավորումների հուսալիության հարցերով աշխատանքային խմբի գործունեության վերաբերյալ,
- ԱՊՀ էլեկտրաէներգետիկական ոլորտի շրջանակներում միջազգային պայմանագրերի վերաբերյալ և ԱՊՀ էլեկտրաէներգետիկական խորհրդի նորմատիվ և տեխնիկական փաստաթղթերի վերաբերյալ,
- 2019թ. ԱՊՀ էլեկտրաէներգետիկական խորհրդի միջոցառումների ծրագրի և ԱՊՀ ԷԷԽ և նրա գործադիր կոմիտեի ֆինանսավորման եկամուտների և ծախսերի նախահաշիվների նախագծերի վերաբերյալ,
- ԱՊՀ էլեկտրաէներգետիկական խորհրդի հերթական 54-րդ նիստի անցկացման վայրի և ամսաթվի վերաբերյալ,
- Կադրային հարցեր,
- Այլ հարցեր:

7. ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ

Նիստի շրջանակներում ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի պաշտոնակատար Գ. Բաղրամյանը ներկայացրել է Հայաստանի էներգետիկայի բնագավառի զարգացման հիմնական ուղղությունները: Անդրադարձ է կատարվել նաև երկրի ներքին սպառման կառուցվածքում սեփական վերականգնվող աղբյուրներից ստացվող էլեկտրաէներգիայի տեսակարար կշռի շարունակական ավելացման ուղղությամբ իրականացվող քայլերին: Նիստի մասնակիցները հրավիրվել են մասնակցելու 2018թ. նոյեմբերի 14-16-ը Հայաստանում կայանալիք էներգետիկ շաբաթին:

Խորհդի նիստի ընթացքում գործադիր կոմիտեին առաջարկվել է մշակել և խորհրդի քննարկմանը ներկայացնել էներգետիկայի բանգավառում ժամանակակից պահանջներին և մարտահրավերներին համապատասխան հարցեր և առաջարկություններ՝ մասնավորապես խելացի էլեկտրաէներգետիկան համակարգերի, թվայնացման, վերականգնվող էներգետիկայի, էներգախնայողության և էներգաարդյունավետության միջոցառումների ընդլայնման վերաբերյալ:

ԱՊՀ էլեկտրաէներգետիկական խորհրդի գործադիր կոմիտեի նախագահ է վերընտրվել ՌԴ էներգետիկայի նախարար Ա. Նովակը:

ԱՊՀ էլեկտրաէներգետիկական խորհրդի 53-րդ նիստի ընթացքում հանդիպումներ են կայացել ՌԴ էներգետիկայի նախարարության, Ղազախստանի էներգետիկայի նախարարության պատվիրակությունների հետ:

8. ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Օրակարգային բոլոր հարցերի վերաբերյալ խորհուրդն ընդունել է որոշումներ, որոնք ստորագրվել են:

9. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Շարունակել աշխատանքներն ԱՊՀ էլեկտրաէներգետիկական խորհրդում: Շարունակել հետևողական աշխատանքը ԱՊՀ էլեկտրաէներգետիկական համակարգի հետ զուգահեռ աշխատանքի հնարավորություն ստեղծելու նպատակով:

10. ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ, ԱՄՍԱԹԻՎԸ

05 նոյեմբերի 2018թ.